ՆԱՐԵԿ ՌՈՒԲԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1986 թ. նոյեմբերի 12-ին Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում:

2004-2006 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կրթությունը ստացել է Մեղրաձորի միջնակարգ դպրոցում:

2009 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանը՝ ստանալով քաղաքագետի որակավորում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2009-2011 թթ. աշխատել է Մեղրաձորի գյուղապետարանում որպես աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ:

2012-2014 թթ. աշխատել է «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ում որպես ինժեներ-հաշվառող, ապա՝ տեղամասի պետ, այնուհետեւ՝ բաց հանքի պետի տեղակալ:

2015-2016 թթ. աշխատել է ՀՀ Ոստիկանությունում որպես ՀՈԲ տեսուչ:

2017 թ. աշխատել է «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ում որպես լեռնային վարպետ:

2017 թ. դեկտեմբերի 18-ից զբաղեցրել է Մեղրաձոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

2020 թ. փետրվարի 4-ից զբաղեցնում է Մեղրաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

Տպաքանակ՝ 3000 հատ: Տպագրություն՝ "Էյ Էմ-Փի Ջի Գրուպ" ՍՊԸ: Պատվիրատու՝ ՔՊԿ:

ԱՊԱԳԱ ԿԱ ԾԱՂԿԱՁՈՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5
Տեղական Ինքնակառավարման Մարմինների
Ընտրություններ 2021թ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

▸Համայնքի գրավչությունը, բնակլիմայական պայմանները եւ աշխարհագրական դիրքը հաշվի առնելով՝ նպաստավոր պայմաններ ենք ստեղծելու զբոսաշրջության զարգացման համար:
▸ Աջակցելու ենք համայնքի զբոսաշրջության շարունակական զարգացմանը, համաշխարհային զբոսաշրջային շուկայում ճանաչելիությանը, համագործակցության բարձրացմանը եւ մրցունակության ամրապնդմանը:
▸ Աջակցելու ենք ռեզորթային գոտիներ ստեղծելու ծրագրերին:
▸ Կատարելու ենք համայնքի փողոցների բարեկարգման եւ ասֆալտապատման աշխատանքներ:
▸ Արդիականացնելու ենք ոռոգման համակարգը եւ խմելու ջրի ջրագծերը:
▸ Կառուցելու եւ հիմնանորոգելու ենք կոյուղագծերը:
▸ Արդիականացնելու ենք լուսավորության համակարգը:
▸ Հիմնանորոգելու ենք համայնքի հեղեղատարները:
▸ Զարգացնելու ենք համայնքի պոտենցիալը այլընտրանքային էներգիայի կիրառման ուղղությամբ:
▸ Հայտնաբերելու եւ աջակցելու ենք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին:
▸ Իրականացնելու ենք սանիտարական մաքրման եւ աղբահանության բարեփոխումներ:
▸ Իրականացնելու ենք բազմաբնակարան շենքերի հին տանիքների վերանորոգում:
▸Բարեկարգելու ենք բնակելի թաղամասերի բակային տարածքները:
▸Աջակցելու ենք գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերին:
▸ Բարձրացնելու ենք նախադպրոցական հաստատությունների որակն ու դերը:
▸Գործարկելու ենք նոր մանկապարտեզներ:
▸Համայնքի մարզամշակութային կյանքն ակտիվացելու նպատակով իրականացնելու ենք մշակույթի տների կապիտալ վերանորոգման, մարզադաշտերի եւ խաղահրապարակների կառուցման աշխատանքներ:
▸Իրականացնելու ենք համայնքի գերեզմանատների բարեկարգման աշխատանքներ:
▸Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետու ենք լինելու համայնքի բնակչությանը:

ԱՊԱԳԱ ԿԱ ԾԱՂԿԱՁՈՐ